ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

(XIX դ. 50-70-ական թթ.)

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Հ.

XIX դ. 70-ական թթ. քաղաքական հորիզոնում նորից նշմարվեց «Արևելյան հարցը»[1], ինչը ուներ մի շարք պատճառներ: Օսմանյան կայսրության լուծը կրում էին ոչ միայն մահմեդական թուրքահպատակ, այլև բազմաթիվ քրիստոնյա ժողովուրդներ՝ հարավային սլավոններ, հույներ, հայեր և այլն, որոնք դարեր շարունակ ընդվզել են օսմանյան բռնապետության դեմ՝ մղելով ազգային-ազատագրական պայքար: Ազգային-ազատագրական պայքարն իր հերթին հանգեցնում է Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական քայքայմանը: Ելնելով իրենց զավթողական պլաններից՝ եվրոպական խոշոր տերություններն ակտիվ միջամտում էին Օսմանյան կայսրության ներքին գործերին, ինչի արձագանքն էր Արևելյան հարցը և նրա սրացումը, որի բովանդակությունն էր կազմում թուրքական բռնապետության զանազան դրսևորումների դեմ մղվող սոցիալական, նաև ազգային-ազատագրական պայքարը: Այն իր գագաթնակետին հասավ 1870-ական թթ. Արևելյան ճգնաժամի և որպես դրա հետևանք՝ ռուս-թուրքական պատերազմի (1877-1878) ժամանակ: Ազգային-ազատագրական պայքարի կրակը արդեն կայծկլտում էր Օսմանյան կայսրության արևմտյան մասում՝ Բալկաններում, որտեղ (ինչպես նաև Արևմտյան Հայաստանում և նեղուցների շրջանում) բախվում էին եվրոպական տերությունների շահերը. վերջիններս էլ թելադրում էին ուրույն քաղաքականություն ինչպես Արևելյան հարցի, այնպես էլ նրա բաղադրիչ մասի՝ Հայկական հարցի նկատմամբ: Քանի որ Ռուսաստանը ձգտում էր Բալկանյան թերակղզին և Արևմտյան Հայաստանը անջատել Օսմանյան կայսրությունից, ապա նա աջակցում էր ազգային-ազատագրական շարժմանը: Իսկ արևմտյան տերությունները միջոցներ էին գործադրում, որպեսզի կասեցնեն այդ շարժումը՝ ի նպաստ Թուրքիայի ամբողջականության և ընդդեմ Ռուսաստանի հզորացման Բալկաններում ու Մերձավոր Արևելքում: Չէ՞ որ բալկանյան մարզերի և Արևմտահայաստանի անջատումը Թուրքիայից կթուլացներ կայսրությունը՝ հօգուտ ռուսական դիրքերի ամրապնդմանը նշված տարածաշրջանում: Արևմտյան պետություններին սպառնում էր նաև (Ռուսաստանի հզորացման դեպքում) Թուրքիայի ներքին շուկաների կորուստը, ինչը կվնասեր Անգլիայի և Ֆրանսիայի տնտեսական շահերին: Եվրոպական պետությունները և՛ ֆինանսապես, և՛

[1] 1870-ական թթ. ավելի սրվեցին մեծ տերությունների հակասությունները Մերձավոր Արևելքում և Բալկանյան թերակղզում: Այդ հակասություններն էլ կազմում էին Արևելյան հարցի էությունը, իսկ հակասությունների՝ հակամարտության գերաճումը առաջացրեց արևելյան ճգնաժամը 1875-1878 թթ.:

տնտեսապես իշխում էին Օսմանյան կայսրությունում: Կայսրության արտաքին պարտքերը անկասելիորեն աճում էին: Այդ պարտքերը մարելու և նրանց դիմաց տոկոսներ վճարելու պատճառով ավելի էին սաստկացվում հարկերը, որ կեղեքում էին ինչպես սլավոնական ժողովուրդներին, այնպես էլ հայերին: Այդ ամենին, ինչպես հայտնի է, գումարվում էին «կրոնական հետապնդումները, եկեղեցիների կողոպուտն ու թալանը, սրբավայրերի պղծումը, շենքերի ավերումը, հոգևորականներին պատժելը, աքսորելը և այլն»[2]: Նույն ձևով էին հալածվում նաև սլավոնական ժողովուրդները: Այսպիսի անագորույն և իրավազուրկ կացության հետևանքն են դառնում ազատագրական ընդվզումներն ինչպես կայսրության արևմտյան (Բոսնիայում, Հերցեգովինայում, Բուլղարիայում), այնպես էլ արևելյան մասերում՝ Արևմտահայաստանում, նաև արաբական երկրներում:

Բալկանյան իրադարձություններն իրենց շուրջ են համախմբում եվրոպական տերություններին՝ դառնալով դրանց լարված դիվանագիտական պայքարի թիրախը: Այս պայքարում էլ դիմակազերծվում է Արևելյան հարցի շուրջ վարվող՝ պետությունների շահադիտական քաղաքականությունը՝ իր նենգ և ուրույն դրսևորումներով: Տերությունները (Ռուսաստանից բացի) միասնական էին մի հարցում. խոչընդոտել և կասեցնել ինչպես բալկանյան, այնպես էլ հայ ժողովրդի ազատագրական պայքարը ընդդեմ օսմանյան բռնապետության: Բնականաբար, Ռուսաստանի աջակցությունը անշահախնդիր չէր. նա նույնպես հետապնդում էր իր քաղաքական, տնտեսական և գաղութատիրական շահերը:

Յուրաքանչյուր տերություն իր ծրագիրն ուներ Օսմանյան կայսրության հարցում. նրանցից ոչ մեկին չէր հետաքրքրում հայ ժողովրդի աղետալի ճակատագիրը:

Բալկանյան սլավոնների, նաև հայերի, արաբների աճող ազգային-ազատագրական շարժումները տագնապ էին առաջացնում ոչ միայն ավատական Թուրքիայի ղեկավար, այլ նաև Եվրոպայի իմպերիալիստական շրջաններում, որոնք շահագրգռված էին պահպանել թուրքական գործոնը և ազգային շարժումները օգտագործել իրենց սեփական՝ քաղաքական կամ ռազմավարական նպատակներով: Տերություններից յուրաքանչյուրն ուներ իր դիրքորոշումը Հայկական հարցի՝ իբրև Արևելյան հարցի բաղկացուցիչ մասի նկատմամբ, և նրանց հետաքրքրություններն Արևմտյան Հայաստանի հանդեպ ոչ միայն զանազանվում էին, այլև երբեմն էլ թշնամական էին միմյանց նկատմամբ:

«Գոյություն չունի միջազգային ոչ մի հարց, որն այդ աստիճան արտահայտի անհաշտ պայքարը չարի ու բարու, ազատության և ճորտության, իրավունքի և կամայականության, բարբարոսության և քաղաքակրթության միջև, ինչպիսին է Արևելյան հարցը: Այս հարցում կարելի է ընտրություն անել միայն թուրքերի և քրիստոնյաների, թուրքական բռնապետության և քրիստոնյաների կյանքի իրավունքի, բաշիբոզուկների հանդեպ սիրո և ռայաների հանդեպ տածած կարեկցանքի միջև»: Այսպես է բնութագրում և վերլուծում Արևելյան հարցը

[2] Բաղալյան Խ., «Հայկական հարցը» Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1878 թ., Ե., 1955, էջ 18:

իրավագետ Ֆ. Մարտենսը[3]: Հայկական հարցը՝ որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս, նրա ընթացքը և զարգացումը հայ ժողովրդին պատճառեցին ֆիզիկական և նյութական մեծ կորուստներ՝ զանգվածային ջարդերը դարձնելով հայերի համար ճակատագրական: «Արևելյան հարցը անխզելիորեն կապված էր դարեր շարունակ սուլթանական իշխանությունների ճնշման տակ տառապող մուսուլման և քրիստոնյա ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հետ. այն անմիջականորեն առնչվում էր թուրքերի, հույների, հայերի, սերբերի, բուլղարների, ռումինների… արաբների, մոլդովացիների… ճակատագրին»[4]:

1852-1856 թթ. նոր էջ բացեցին Արևելյան հարցի պատմության, նաև միջազգային դիվանագիտության գործունեության մեջ, որը ծավալվեց Բալկանյան թերակղզու շուրջ: Թուրքիան դարձավ մեծ տերությունների զավթողական քաղաքականության առարկա: «Մեծ տերությունները, հիմնվելով ամենազորեղի իրավունքի վրա, իրենց համարում էին Թուրքիայի օրինական ժառանգորդները: Նրանց հետաքրքրում էր ոչ թե թուրքական բռնապետության ոչնչացումը, ոչ թե ճնշված ժողովուրդների ազատագրումը, այլ կայսրության բաժանումը իրենց միջև»[5]: Տերությունների մրցակցությունը «սանձելու» նպատակով և ճնշված ժողովուրդների պաշտպանության քողի տակ Օսմանյան կայսրությունում ստեղծվեց ստատուս քվոյի բանաձևը, որի եռանդուն պաշտպանությունը հասցնելու էր նրան, որ մեծ տերությունները աջակցեն Օսմանյան կայսրությունում կազմակերպվող քրիստոնյաների բարբարոսական ջարդերին: Տերությունները, հետապնդելով իրենց քաղաքական նպատակները, ձգտում էին արտոնություններ ձեռք բերել օսմանյան գործերում՝ հանդես գալով ճնշված ժողովուրդների անունից: Հայ հասարակական գործիչները հարում էին այն տեսակետին, որ հասարակական հիմնահարցերի լուծման հիմքում ընկած է ուժի գործոնը և, ելնելով այս դրույթից, անհրաժեշտ էին համարում դիմել առավել հզոր պետության, որը ի վիճակի կլինի նպաստել հայությանը: Սակայն պետությունների քաղաքական շահերը վեր էին ճնշված ազգերի հույսերից ու ակնկալիքներից, և հայ ժողովրդի վաղվա օրը կախված էր տերությունների ուժերի փոխհարաբերակցությունից, ինչպես ոչ վաղ անցյալում՝ Արևելյան Հայաստանի դեպքում[6]: «Հայկական հարցը խանգարում էր

---

[3] **Мартенс Ф.,** *Восточная война и Брюссельская конференция 1874-1878 гг., СПб., 1879, с. 171.*

[4] **Чихачев П. А.,** *Великие державы и Восточный вопрос, М., 1970, с. 6 (Предисловие В. В. Цыбульского).*

[5] Նույն տեղում, էջ 174:

[6] Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին վերջինիս համար ուներ տնտեսական-քաղաքական մեծ նշանակություն, քանի որ հնարավորություն էր տալիս մեկուսացնել Անգլիային և իշխել Պարսկաստանի շուկաներում: Անգլիան էլ իր հերթին ձգտում էր խոչընդոտել Ռուսաստանին՝ Հայաստանը որպես Պարսկաստանի բանալի ձեռք բերելու հարցում (**Борьян Б. А.,** *Армения. Международная дипломатия и СССР, ч. I, М.-Л., 1928, с. 216).* Սակայն ցարական կառավարության լայնածավալ ծրագրերը «նախատեսում էին ոչ միայն պարսկական, այլև թուրքական շուկայի զավթումը՝ Տրապիզոնի գրավմամբ, քանի որ Տրապիզոնը անգլիական ապրանքների ներմուծման գլխավոր նավահանգիստն էր», այդ նպատակով էլ Ռուսաստանը ձգտում էր իր կողմը գրավել հայ առևտրականներին. հակառակ դեպքում հայերը անգլիական առևտրական ընկերությունների հենարանը կդառնային Տրապիզոնում: «Հիմա՝ Հյուսիսային

ցարական կառավարությանը կենսագործել իր բաղձալի երազանքները, քանզի Անգլիայի շահերը հակասում էին Ռուսաստանի զավթողական քաղաքականությանը»[7]: Եթե Հայաստանը դառնար ինքնավար, ապա այն կխոչընդոտեր Ռուսաստանին ելք ստանալ դեպի Միջերկրական ծով, իսկ այս դեպքում Ռուսաստանը չէր կարող իշխել Փոքր Ասիայի արևելյան մասում, ինչը մեծ վնաս կհասցներ Ռուսաստանին թե՛ ռազմավարական, թե՛ տնտեսական ոլորտում: Մ. Պոկրովսկին, ելնելով վերոհիշյալ կարևոր հանգամանքից, գտնում էր, որ Ռուսաստանի առջև ծառացել էր Հայաստանի գրավման հարցը, քանի որ «Սև ծովից դեպի Պարսկաստան… տանող ճանապարհը անցնում է Տրապիզոնով և Էրզրումով»[8], ահա թե ինչու Արևմտյան Հայաստանի գրավումը այդքան կարևոր էր ցարական կառավարության համար. դա հենակետ էր հետագա տնտեսական-ռազմավարական դիրքերը ամրապնդելու համար: Ելնելով Անգլիայի և Ռուսաստանի շահագրգիռ քաղաքական մոտեցումից Հայաստանի և Հայկական հարցի նկատմամբ՝ Բ. Բորյանը եզրակացնում է, որ այդ երկու տերությունների համար Հայկական հարցը ոչ թե հայ ժողովրդի ազատագրման և ինքնավարության հարցն էր, այլ Հայկական լեռնաշխարհում Անգլիայի կամ Ռուսաստանի գերիշխանության խնդիր[9]:

Ղրիմի պատերազմը, որպես XIX դ. կեսի արևելյան քաղաքականության բարձրակետ (1853-1856 թթ.), նույնպես ռազմական առճակատում էր Արևելքում առաջնություն հաստատելու հարցում: Սակայն ո՛չ Ղրիմի պատերազմը և ո՛չ էլ Փարիզի դաշնագիրը չլուծեցին Արևելյան հարցը: Եվ մեծ տերությունները, սատարելով Թուրքիային, պաշտպանում էին իրենց շահերը Ռուսաստանի զավթողական քաղաքականությունից: «Իհարկե, ցարիզմը, արտահայտելով Ռուսաստանի իշխող դասակարգերի շահերը, հետապնդում էր զավթողական նպատակներ: Ցարական կառավարությունն… աջակցում էր Թուրքիայի բալկանյան գավառների սլավոններին… ձգտելով ուժեղացնել իր ազդեցությունը այս մասում և ապահովել սևծովյան նեղուցների շահավետ ռեժիմը»[10]:

Արևմտյան տերությունները ձգտում էին ոչ միայն նվազեցնել Ռուսաստանի դիրքերը Բալկաններում, այլև փորձում էին ամեն ինչ անել, որպեսզի Թուրքիան ենթարկվի իրենց: Հատկապես մեծ ակտիվություն էր ցուցաբերում Անգլիան, որն իր զավթողական քաղաքականությունը քողարկում էր Թուրքիայում ստատուս քվոյի պաշտպանությամբ և Ռուսաստանին դիմակայությամբ: Նա նպատակ ուներ

Պարսկաստանը օկուպացնելուց հետո, առաջնահերթ է Հայաստանին տիրելը, որը տնտեսապես և ռազմավարապես իշխում էր Փոքր Ասիայի արևելյան կեսում. Սև ծովից դեպի Պարսկաստան, նաև Տիգրիսի և Եփրատի վերին հոսանքները տանող ճանապարհը անցնում է Տրապիզոնով և Էրզրումով, որոնք Հայկական լեռնաշխարհի քաղաքներն են» (**Покровский М. Н.,** *Дипломатия и войны царской России в XIX в., М., 1923, с. 386).*

[7] **Борьян Б. А.**, նշվ. աշխ., էջ 217:

[8] **Покровский М. Н.,** նշվ. աշխ., էջ 386:

[9] **Борьян Б. А.**, նշվ. աշխ., էջ 217:

[10] **Чихачев П. А.,** նշվ. աշխ., էջ 8:

գրավել նեղուցները և Օսմանյան կայսրության տարածքը վերածել գաղութի[11]: «Մեծ Բրիտանիայի աշխարհագրական դիրքը որոշեց այն ուղին, որով զարգանում են նրա շահերը և արտադրողական ուժերը՝ վերածելով նրան չափազանց շահադիտական երկրի»[12]: «Ամենից վեր է դասում Անգլիան իր առևտրական շահերը և ծովային հզորությունը՝ հաճախ արհամարհելով բարոյական իրավունքը և միջազգային հարաբերություններում ընդունված նորմերը… Նա իրեն էր հարմարեցրել միջազգային իրավունքը՝ սեփականացնելով բոլոր կոնֆլիկտներին միջամտելու իրավունքը»[13]: Պատահական չէր, որ անգլիական դիվանագիտության կարգախոսն էր Պալմերստոնի հանրահայտ արտահայտությունը. «Անգլիան չունի մշտական բարեկամներ և դաշնակիցներ, այլ ունի մշտական շահեր», որոնք նա պիտի պաշտպաներ բոլոր միջոցներով: Հայկական հարցում Անգլիան ամենից շատ շահագրգռված էր մեկուսացնել Ռուսաստանին: Խ. Լինչը, որն զբաղվել է Արևմտյան Հայաստանի ուսումնասիրությամբ, նշել է, որ չէր կարելի թույլ տալ, որ Արևմտյան Հայաստանում իշխի Ռուսաստանը: Ընդգծելով Արևմտյան Հայաստանի ռազմավարական և տնտեսական նշանակությունը եվրոպական տերությունների համար՝ նա գտնում էր, որ Եվրոպան շահագրգռված էր ասիական այս գավառների ապագայի հարցում, նախ և առաջ՝ առևտրի տեսակետից. «Մեծ առևտրական ճանապարհը՝ սևծովյան նավահանգիստների և ներքին Պարսկաստանի միջև, անցնում էր մի շարք հայկական դաշտավայրերով: Եթե Էրզրումը զավթեր որևէ հովանավորող տերություն, ապա այս կարևորագույն առևտրական ուղին զգալի չափով կկորցներ իր նշանակությունը, և Պարսկաստանը կկտրվեր Սև ծովից: Ոչ պակաս կարևոր կլինեին նման զավթումի հետևանքները նաև քաղաքական առումով: Այս երկրի (Արևմտյան Հայաստանի – Հ. Գ.) ռազմավարական նշանակությունը դժվար է գերագնահատել: Թուրքահայաստանը Մերձավոր Ասիայի համար հանգուցային կետ է, որտեղից ուղիները տանում են դեպի արևմուտք, հարավ և արևելք: Մի կողմից այս ուղիները դուրս են բերում դեպի Միջերկրական ծովեզրը, մյուս կողմից՝ դեպի Պարսից ծոց»[14]: Մանրամասնելով Արևմտյան Հայաստանի ռազմավարական, տնտեսական և քաղաքական նշանակությունը՝ Խ. Լինչը ընդգծում է Անգլիայի շահերը Արևմտահայաստանի նկատմամբ. «Մեծ Բրիտանիայի շահերը … սերտորեն կապված են Օսմանյան կայսրության ասիական գավառների հետ: Մենք ստեղծել ենք մի ամբողջական առևտրական հա-

---

[11] Առաջ անցնելով՝ նշենք, որ 1878 թ. Օսմանյան կայսրությունից Կիպրոսը անջատելու և սեփական գաղութի վերածելու նպատակով Անգլիան հանդես էր գալիս իբրև արևմտահայերի պաշտպան: Եվ միջամտելով Հայկական հարցին Բեռլինի վեհաժողովում՝ Անգլիան դարձյալ ձգտում էր հաստատել իր ազդեցությունը Օսմանյան Թուրքիայում: Իր իրական մտադրությունները թաքցնելու նպատակով անգլիական դիվանագիտությունը «աղաղակում էր» Օսմանյան կայսրության անձեռնմխելիության մասին: Նա օգտագործում էր բոլոր միջոցները Ռուսաստանի դիրքերը Արևմտյան Հայաստանում թուլացնելու համար, քանի որ Արևմտյան Հայաստանը Անգլիայի (ինչպես նաև եվրոպական այլ տերությունների համար) ուներ ռազմավարական և տնտեսական նշանակություն:

[12] **Чихачев П. А.,** նշվ. աշխ., էջ 19:

[13] Նույն տեղում, էջ 20:

[14] **Линч Х. Ф.,** *Армения. Путевые очерки и этюды, т. II, Тифлис, 1910, с. 562-563.*

մակարգ, որն ընդլայնվում է մինչև Մեսոպոտամիայի խորքերը և ընդգրկում ողջ հարավային Պարսկաստանը»[15]: Այդ իսկ պատճառով Անգլիան ձգտում էր, որ Արևմտյան Հայաստանը մնա Օսմանյան կայսրության սահմաններում՝ լինելով ռազմաքաղաքական բազա Ռուսաստանի դեմ[16]:

Անգլիայի հետ մեկտեղ Ֆրանսիան նույնպես ձգտում էր նվազեցնել Ռուսաստանի բարոյաքաղաքական նշանակությունը Արևելքում և Փոքր Ասիայում՝ այնտեղ իր քաղաքական ազդեցությունն ամրապնդելու մտահոգությամբ: Ֆրանսիան ձգտում էր հաստատվել, մասնավորապես, Կիլիկիայում՝ գործի դնելով դավանական ազդեցության լծակները:

Փարիզի դաշնագրի IX հոդվածի վերջին մասի ձևակերպումը՝ «տերություններն իրավունք չունեն՝ միացյալ կամ առանձին, միջամտել կայսրության ներքին կառավարմանը», ուղղված էր Ռուսաստանի դեմ, որը գործում էր կայսրության ճնշված քրիստոնյաների պաշտպանության պատրվակով: Այս հոդվածը, պարտադրելով Բ. Դռանը բարեկարգել իր հպատակների վիճակը «անկախ դավանանքի տարբերությունից», 1856 թվականից իրավունք էր վերապահում հայերին և այլ քրիստոնյա թուրքահպատակ ժողովուրդներին սուլթանի կողմից խոստացած բարենորոգումները դիտելու որպես «այնպիսի բարենորոգումներ, որոնք առնվազն անձայն պիտի երաշխավորվեին Եվրոպայի կողմից»[17]: Մինչև Փարիզի դաշնագիրը կնքելը հայերը մեծ հույսեր էին կապում միջազգային պայմանագրերի և տերությունների խոստումների հետ: Ինչպես նշում է Գ. Դինը, «1774 թ. Քյուչուկ-Կայնարջիի դաշնագիրը, որով Արևելքի քրիստոնյաները անցնում էին Ռուսաստանի հովանու ներքո, առաջին անգամ հայերի հույսերը լավագույն գալիքի վերաբերյալ երկնային երազանքների ոլորտից տեղափոխեց եթե ոչ ճշգրիտ, ապա ապագայում հնարավոր բարեփոխումների ոլորտ»[18]: Միջազգային իրավունքի տեսակետից վերոհիշյալ դաշնագիրը (Քյուչուկ-Կայնարջիի) առաջինը չէր, որ մատնանշում էր մեծ տերությունների դերը՝ հայերի ազատագրման հարցում, իսկ «իրավաբանական տեսանկյունից Ղրիմի պատերազմը էական փոփոխություններ մտցրեց թուրքահայերի կացության մեջ, քանզի այս անգամ հարցադրումը ճշգրիտ էր և ուներ իրավական հիմք», սակայն «այդպիսի հարցերը լուծվում են ուժով, այլ ոչ թե ձևական իրավունքով»[19], և դաշնագրով նախատեսված բարեփոխումների բազմաչարչար հարցն այդ իսկ պատճառով

---

[15] Նույն տեղում, էջ 566:

[16] Ո՛չ Անգլիան, ո՛չ էլ Ռուսաստանը շահագրգռված չէին անկախ հայկական պետության ստեղծման հարցում. Ռուսաստանը ձգտում էր իր տարածքին միացնել սահմանամերձ հայկական վիլայեթները, իսկ այն պետությունները, որոնք տարածքային առնչություն չունեին Օսմանյան Թուրքիայի հետ, նախընտրելով, որ դրանք մնան Օսմանյան կայսրության սահմաններում, ձգտում էին ուժեղացնել իրենց ազդեցությունը Արևմտյան Հայաստանում:

[17] **Ролен-Жекмен,** *Армения, армяне и трактаты (Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., М., 1896, с. 15).*

[18] **Диев Гр. А.,** *Армянский вопрос в Турции (из переписки со стамбульским публицистом), М., 1893, с. 23.*

[19] **Борьян Б. А.,** նշվ. աշխ., էջ 221:

չլուծվեց: Հայկական հարցը Օսմանյան կայսրության այլ՝ քրիստոնյաների հարցերի հետ մեկտեղ Արևելյան հարցի բաղադրիչ մասից վերածվեց միջազգային հարցի:

Դեռ 1867 թ. մարտի 12/24-ի հուշագրում Ռուսաստանը նշում էր, որ Արևելյան հարցի իրական լուծումը հնարավոր է հետևյալ ճանապարհով. «Քրիստոնյաների շահերը բաժանել մահմեդականների շահերից, դյուրացնելով տարբեր ցեղերի և կրոնների զուգահեռաբար զարգացումն ու բարգավաճումը սուլթանի իշխանության տակ և եվրոպական հավասարակշռության պահանջի համաձայն»[20]: Ռուսական կառավարությունը գտնում էր, որ «քանի որ թուրքերը կմնան թուրք, այսինքն, քանի որ Ղուրանը միանգամայն գիծ է սահմանում մահմեդականների և քրիստոնյաների միջև», ուստի «օրենքի առջև հավասարությունը միշտ ցնորք պիտի մնա Թուրքիայում, որովհետև օսմանյան հպատակ ցեղերը միևնույն սկզբունքը չեն դավանում, և այնտեղ, ուր սկզբունքների նույնություն չկա, պարտականությունների նույնություն էլ չէ կարող լինել»[21]: Այս գաղափարի վրա էր բևեռում իր ուշադրությունը Ռուսաստանը, երբ 1867 թ. եվրոպական պետությունները Թուրքիայի բարենորոգումների հարցերը իրենց քննարկման առարկան դարձրեցին: Ռուսաստանը գավառական ապակենտրոնացման և տեղական ինքնավարության կողմնակիցն էր՝ սուլթանի իշխանության ներքո: Այս մոտեցումը տեղական բարենորոգումների ձևակերպման այն տարբերակներից էր, որ ի վերջո, ռուսական դիվանագիտությունն ուղղում էր ընդհանուր բարենորոգումների երեսպաշտական օսմանյան ծրագրի դեմ: Ռուսական ծրագրին հարեց նաև Ավստրիան, որը նշում էր, որ սուլթանը, ելնելով իր սեփական շահերից, ինքնավարություն պիտի տրամադրի իր քրիստոնյա հպատակներին[22]: Հարկ է նշել, որ Ռուսաստանի առաջարկությունը՝ տեղական ինքնավարություններ ստեղծելու ուղղությամբ, հետամտում էր Բալկանյան թերակղզու քրիստոնյաների՝ սլավոնների կացության բարելավումը: Սակայն, եթե 1867 թ. եվրոպական տերություններն ընդունեին այս առաջարկությունն իբրև Օսմանյան կայսրության քրիստոնյաների համար ընդհանուր վարչական համակարգ, ապա հնարավոր էր, որ այն տարածվեր նաև հայերի վրա: Մինչդեռ Բ. Դուռը երկյուղում էր այս առաջարկից, կասկածելով, որ տեղական ինքնավարության քողի ներքո Ռուսաստանը, լինելով Թուրքիայի դարավոր թշնամին, ձգտում էր Օսմանյան կայսրության անդամահատությանը[23]: Համենայն դեպս, օսմանյան քաղաքա-

---

[20] **Սարուխան,** Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), հ. Ա, Թիֆլիս, 1912, էջ 87-88:

[21] Նույն տեղում, էջ 88:

[22] Ավստրիան նույնիսկ պնդում էր մի նոր խորհրդակցություն կազմել այս հարցի քննարկման և լուծման շուրջ, սակայն իր ներքին քաղաքական խնդիրներից ելնելով, հետ կանգնեց իր առաջարկությունից (**Սարուխան,** նշվ. աշխ., էջ 88-89):

[23] Նույն տեղում, էջ 89-90: Ռուսաստանի տեսակետը պատասխան էր 1867 թ. փետրվարի 22-ի ֆրանսիական կառավարության հուշագրին, որտեղ նշվում էր, որ 1856 թ. հաթթի 35 կետերից կենսագործվեցին առաջին 16 կետերը, իսկ մնացած 19 կետերի կատարման համար ֆրանսիական կառավարությունն առաջարկում էր մի շարք միջոցներ: Ֆրանսիական ազդեցությունը Թուրքիայում՝ նաև ֆրանսիական բարենորոգումների ծրագիրը, գոյատևեցին մինչև 1870 թ., որից հետո ֆրանս-գերմանական պատերազմի արդյունքում փլուզվեց Նապոլեոնի կայսրությունը:

կանությունն իրեն ապահով էր զգում՝ վերը նշված ընդհանուր բարենորոգումների սկզբունքին հավատարիմ մնալով:

Պատմական այս փուլում Օսմանյան կայսրության պաշտոնական շրջանները Ֆրանսիայի ազդեցության անկման հետևանքով իրենց ներքին գործերում ստացան ավելի մեծ ազատություն ու անկախություն, և նրանց շարքերում ծնվեց մի նոր ծրագիր՝ պանօսմանիզմի ծրագիրը, որը կազմում էր «նոր օսմանների» գաղափարախոսության հիմքը: «Եվրոպական անվրեպ միջամտության երկյուղի տակ՝ թուրք պետական անձինք, մանավանդ երիտասարդ թուրքերը, ճնշում գործադրին սուլթան Ազիզի վրա, որ 1875-ի հոկտեմբերի 2-ին մի իրադե և դեկտեմբերի 12-ին մի ֆերման հանեց, որոնցով կրկնվում էին այն բոլոր խոստումները, որոնք… արդեն մտել էին 1839-ի և 1856-ի հաթթը հյումայունների մեջ, բայց չէին գործադրվել, հետևաբար չէին կարող գոհացնել եվրոպական տերություններին»[24] :

Ավստրիայի արտաքին գործերի նախարար կոմս Անդրաշին 1875 թ. դեկտեմբերի հուշագրում՝ ուղղված եվրոպական տերություններին, անբավարար գտնելով սուլթանի ձեռնարկումները, հատկապես ապստամբած գավառները խաղաղեցնելու հարցում, առաջարկում է, որ սուլթանի հրովարտակներով նախատեսված բարենորոգումների 5 կետերը, որոնց մեջ առաջնայինն էր «կրոնի կատարյալ և ամբողջական ազատությունը», անմիջապես կենսագործվեն: Հուշագիրը պահանջում էր նաև, որ քրիստոնյաներից և մահմեդականներից բաղկացած մի հանձնաժողով կազմվի՝ բարենորոգումների կենսագործմանը հետևելու նպատակով: Օսմանյան կայսրությունը մերժեց այս առաջարկությունը, քանի որ, իբր, մտադիր էր բարենորոգումներ անցկացնել ոչ միայն հօգուտ Եվրոպական Թուրքիայի սլավոնների՝ անընդունելի համարելով զրկել մյուս նահանգների քրիստոնյաներին նման առանձնաշնորհներից, որոնք, ընդ որում, պիտի տարածվեին նաև թուրք բնակչության վրա: Իհարկե, սա վերը նշված դիվանագիտական խաղն էր՝ Ավստրիայի և Ռուսաստանի ճնշումից ազատվելու համար: Այսպիսով, Թուրքիան պնդում էր ընդհանուր և ոչ թե մասնակի բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտությունը՝ վերացական և ընդհանուր ձևակերպումների տակ թողնելով քաղաքական օրակարգի կոնկրետ հարցադրումները:

Եվրոպական տերությունները դեռ չէին հստակեցրել իրենց վերջնական դիրքորոշումը, երբ ապստամբությունը տարածվեց Բուլղարիայում, և 1876 թ. մայիսին Սալոնիկում սպանվեցին ֆրանսիական ու գերմանական հյուպատոսները: Գերմանիան՝ Ավստրիայի և Ռուսաստանի հետ մեկտեղ, հայտնեցին Օսմանյան կայսրությանը, որ եթե վերջինս չիրականացնի առաջարկած բարեփոխումների ծրագիրը, իրենք կդիմեն բռնի գործողությունների: Այս սպառնալիքը

Ֆրանսիան երկար ժամանակ համարվում էր քրիստոնյաների պաշտպանը Օսմանյան կայսրությունում: Երբ Ֆրանսիան՝ «Փարիզի կոնգրեսի գլխավոր դերակատարը», մեկուսացվեց, դուրս մղվելով քաղաքական ասպարեզից, Ռուսաստանը նորից ձեռք բերեց իր նախկին հեղինակությունը Թուրքիայում: Սակայն այս անգամ նրա քաղաքականությունը հիմնված էր համասլավության գաղափարի վրա՝ պաշտպանելով Թուրքիայի սլավոնների շահերը:

[24] Նույն տեղում, էջ 100-101:

առաջացրեց Անգլիայի դժգոհությունը, որը չմիացավ մնացած պետություններին: Ստեղծված հակասությունից օգտվեց Բ. Դուռը, որը դիմեց բարեփոխումների իր խոստումների քաղաքականությանը, իսկ անհնազանդ քրիստոնյաներին մատնեց սրի և հրի՝ արյան մեջ խեղդելով Բուլղարիան, ինչը ստիպեց Անգլիային միանալ մյուս պետություններին՝ ընդունելով դեռ 1867 թ. Ռուսաստանի կողմից առաջարկված բանաձևը՝ տեղական վարչական ինքնավարության գաղափարը: Ֆրանսիան մտավախություն հայտնեց, որ ամենաազնիվ մտադրությունները չեն իրականանում՝ հանդիպելով «մութ և անհաղթահարելի ընդդիմության»: Ելնելով այս բարդ իրավիճակից՝ 1876 թ. դեկտեմբերին եվրոպական տերությունները դեսպանախորհուրդ գումարեցին Կ. Պոլսում: Անգլիան իր պատգամավորներին հրահանգ տվեց առ այն, որ Եվրոպական Թուրքիայի քրիստոնյաներին պետք է տրամադրել «մի տեսակ տեղական ինքնավարություն», որ կլինի նրանց բարեկեցության լավագույն գրավականը:

1876 թ. բուլղարական ապստամբությունը թուրքերին ստիպեց կոչ անել կայսրության բոլոր հպատակներին՝ աջակցել օսմանյան իշխանություններին ստեղծված իրավիճակում: Հայերը հայտնվեցին դժվարին կացության մեջ: Նրանք կա՛մ պիտի հետևեին սլավոնների օրինակին, կա՛մ էլ աջակցեին օսմանյան կառավարությանը: Ներսես պատրիարքը հայ ժողովրդին հղեց մի շրջաբերական, որտեղ ասվում էր հետևյալը. եթե հայ ազգը մինչ օրս պահպանվել է որպես ազգ և պահպանում է իր կրոնը, եկեղեցին, լեզուն, պատմական և մշակութային արժեքները, ապա կարողացել է այդ ամենը պահպանել միայն օսմանյան կառավարության հովանավորության, աջակցության և բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ[25]: Ելնելով սրանից՝ այս օրհասական պահին հայերը պարտավոր են օգնության ձեռք մեկնել օսմանյան իշխանությանը: Ուստի պատրիարքը կոչ էր անում համալրել թուրքական բանակը կամավոր հիմունքներով՝ սուլթանին թշնամուց պաշտպանելու: Աբդուլ Համիդը վարում էր չափազանց շրջահայաց՝ թե՛ արտաքին, թե՛ ներքին քաղաքականություն: Ռուսական հավակնությունները Բալկանյան թերակղզում չեզոքացնելու նպատակով նա Եվրոպայի առջև ստանձնեց բարեփոխումների իրագործումը: Եվ հռչակելով Օսմանյան սահմանադրությունը (1876 թ. դեկտեմբեր), Եվրոպային ապակողմնորոշելով «ազատության, արդարության և հավասարության» կարգախոսներով՝ նա քայլ առ քայլ իրագործում էր իր նենգամիտ քաղաքականությունը: Թուրքահպատակ ռայաներին՝ հույներին ու հայերին, դրդելով նույնպես հանդես գալ իրենց ազգային պահանջներով, սլավոններին հակադրելով հայերին ու հույներին՝ նա ձգտում էր ուրվագծվող ռուս-թուրքական պատերազմի շեմին շահել վերջիններիս համակրանքը՝ ջանալով ձեռք բերել հայերի «սիրահոժար գործակցությունը»: Նպաստավոր էին նաև այն հանգամանքները, որ պատմության էջերում արդեն գրվել էին «Նոր օսմանների» անունները, իսկ բարենորոգումների դյութիչ մեղեդին շոյում էր պոլսահայերի ունկերը: Այս ամենը նպաստում էր հայերի օսմանանպաստ քաղաքականությանը ռուս-թուրքական պատերազմի նախօրեին:

[25] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, Կ. Պոլիս, 1876, էջ 6:

Իհարկե, պատրիարքի շրջաբերականը միանշանակ արձագանք չունեցավ հայ հասարակության մեջ: Դ. Անանունի դիպուկ արտահայտությամբ «ազգի գլուխն ու մարմինը անհամաձայնության մեջ էին միմյանց հետ»[26]: Կոնդակն արտահայտում էր Կ. Պոլսի հայերի վերնախավի ձգտումները, այլ ոչ թե ամբողջ հայ ազգի կարծիքն ու մտայնությունները: Ճգնաժամային այս պահին Կ. Պոլսում կայացած դեսպանաժողովը՝ ուղղված Արևելյան հարցի շուրջ պետությունների դիրքորոշումը պարզելուն, հետապնդում էր նաև տերությունների գործողությունները համաձայնեցնելու նպատակ: Դեսպանաժողովին մասնակցող Ռուսաստանը հայտարարեց, որ անհրաժեշտ է միավորվել Բալկանյան ճգնաժամը լուծելու հարցում, հակառակ դեպքում նա պատրաստ էր դիմելու ինքնուրույն քայլերի՝ Բ. Դռան տված խոստումների կատարման երաշխիքը ստանալու:

Աբդուլ Համիդը խորամանկորեն հայտարարում էր, որ կայսրության ճգնաժամի ծագումն ու պատճառները պայմանավորված են օրենքների ոչ ճիշտ կիրարկմամբ[27]: Միջազգային լարված պայմաններից ելնելով՝ հռչակվեց 1876 թ. Օսմանյան սահմանադրությունը, որով Բ. Դուռը հետամտում էր կասեցնել միջազգային իրավունքի տարածումը թուրքահպատակ քրիստոնյաների վրա, այսինքն՝ տերություններին մղում էր չմիջամտել կայսրության ներքին գործերին, քանզի Սահմանադրությունը, իբր, արդեն լուծում էր ներքին հարցերը և սահմանում կարգուկանոն: Բայց Սահմանադրությունը չէր երաշխավորում ու պաշտպանում մեծ տերությունների շահերը: Ավելին, Սահմանադրությունը մեռած տառ պետք է մնար ամենից առաջ ոչ մահմեդական հպատակների իրավունքների պաշտպանության հարցում:

Մեծ տերությունները միջամտում էին Օսմանյան կայսրության գործերին ինչպես միասնաբար, այնպես էլ միակողմանի, երկու դեպքերում էլ հետամտելով որոշակի քաղաքական շահեր՝ իրենց մարդասիրական պարտքը կատարելու պատրվակով: Հակառակ Ռուսաստանի, որին չէին կարող բավարարել Ղրիմի պատերազմի արդյունքները, Անգլիան Օսմանյան կայսրության ամբողջականության կողմնակիցն էր և այդ հարցում ավելի շատ ապավինում էր Ավստրիային, քան Ֆրանսիային, քանզի վերջինիս ազդեցությունը 1870-ականներին նվազեց[28]:

---

[26] **Борьян Б. А.,** նշվ. աշխ., էջ 228.

[27] *Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г., с. 34.*

[28] Անգլիային այդքան չէր հուզում կոնտինենտալ հավասարակշռությունը, եթե, իհարկե, այն չէր վերաբերում նրա «ծովային և առևտրական գերիշխանությանը»: Անգլիային ձեռնտու չէր պատերազմել մեծ պետություններից որևէ մեկի, մասնավորապես՝ Ռուսաստանի հետ, քանի որ նրա դիվանագիտությունն արդեն իսկ հաջողությամբ պաշտպանում էր Թուրքիայում անգլիական տնտեսական ու քաղաքական նվաճումները: Իսկ Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանումը սոսկ «մանր» էր, որի շնորհիվ նա «իր քաղաքականության ուղկանի մեջ էր ներքաշում այլ կառավարությունների» (**Чихачев П. А.,** նշվ. աշխ., էջ 34): Անգլիան կարևորություն էր տալիս իր ազդեցության հաստատմանը Արևելքում, որի հիմքում ընկած էին նրա առևտրական շահերը, այսինքն՝ գերիշխանություն հաստատել և ընդլայնել սպառման շուկաները: Անգլիան կարծում էր, որ Ռուսաստանի հաջողություններն Արևելքում սպառնում են իր դիրքերին Հնդկաստանում: Սակայն Ռուսաստանը փորձում էր պահպանել իր ազդեցությունը Արևելքում՝ հանուն իր սահմանների անվտանգության և Սև ծովում իր

Հարկ է նշել, որ 1856 թ. հաթթը հյումայունը կազմվեց անգլիական և ֆրանսիական դեսպանների ճնշման տակ և թելադրանքով: Թանզիմաթի շրջանում Բ. Դռան արտաքին քաղաքականությունն ինչ-որ չափով պայմանավորված էր եվրոպական տերությունների թելադրանքով, մասնավորապես՝ Անգլիայի: Սակայն Օսմանյան կայսրության կառավարությունը, ի դեմս Ալի և Ֆուադ փաշաների, ունենալով արևմտաեվրոպական կողմնորոշում, հմտորեն օգտագործում էր մեծ տերությունների հակասությունները՝ խուսանավելու այն պարտականություն-ներից, որոնք կարող էին ավելի սահմանափակել կայսրության ինքնուրույնու-թյունը: Իսկ Անգլիան այն միակ պետությունն էր, որը հետևողականորեն աջակցում էր Օսմանյան կայսրության ամբողջականությանը, որը«ստատուս քվո» անվան տակ տասնամյակներ շարունակ դառնալու էր դիվանագիտական ոլորտում ամենահաճախ կրկնվող արտահայտությունը, ճնշված ժողովուրդների ազատագրական պայքարի արգելակը»[29]: Եվ այս փաստը քաջ գիտակցում էին թանզիմաթի շրջանի թուրք պետական գործիչները: Իր քաղաքական կտակում այս առիթով Ֆուադ փաշան նշում է. «Ավելի լավ է կորցնել մի քանի գավառ, քան տեսնել, թե ինչպես Անգլիան կլքի Բ. Դուռը»[30]: Իր արևելյան քաղաքականության մեջ Անգլիան առաջնահերթությունը տալիս էր Թուրքիային՝ ելնելով ինչպես վերջինիս տնտեսական նշանակությունից, այնպես էլ նրա ռազմավարական դիրքից Առաջավոր Ասիայում: Անգլիան տնտեսապես վաղուց էր թափանցել Օսմանյան կայսրություն, որտեղից հումք էր ներմուծում և ուր արտահանում էր անգլիական ապրանքները: Մեծ էին Անգլիայի ներդրումները Անատոլիայում, մասնավորապես երկաթուղաշինության մեջ: Այսպիսով, օտարերկրյա կապիտալը լայն ասպարեզ էր գտել Թուրքիայում, որը դարձել էր եվրոպական ապրանքների իրացման և վաճառահանման շուկա: Թուրքիայի աշխարհագրական դիրքը Եվրոպային հնարավորություն էր տալիս առևտրական կապեր ստեղծել արևելյան երկրների հետ, իսկ Բոսֆորն ու Դարդանելը տարանցիկ առևտրի ուղիներ էին: Այս կարևորագույն գործոններով էր բացատրվում պայքարը եվրոպական խոշոր տերությունների միջև «օսմանյան ժառանգության» բաժանման համար, որը քողարկվում էր օսմանահպատակ քրիստոնյաների և բալկանյան սլավոնների շահերի պաշտպանությամբ:

Այսպիսով, XIX դ. 70-ական թվականներին Արևելքում իրադարձությունների ակտիվ մասնակիցներն էին (Թուրքիայից բացի) Ռուսաստանը, Անգլիան ու Ավստրո-Հունգարիան: Այս 3 տերությունները, Արևելքում ամուր դիրքեր գրավելով, ձգտում էին պահպանել ոչ թուրքական ժողովուրդների՝ բալկանյան սլավոնների և

առևտրական շահերի պահպանման: «Ռուսական քաղաքականությունը չէր նախատեսում տարածքների ընդլայնում: Ռուսական կայսրությունն այնքան մեծ է, որ նրա տարածքների չափը դառնում է նրա հզորությունը թուլացնող կողմը: Նրա տարածքների ընդլայնումը կդառնար նրա թուլացման պատճառը» (նույն տեղում, էջ 37):

[29] **Կիրակոսյան Ջ.**, Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.), Ե., 1978, էջ 10:

[30] **Фадеева И. Л.**, *Османская империя и англо-турецкие отношения в середине XIX в., М., 1982, с. 85.*

հայերի ճնշված վիճակը: Իսկ Ռուսաստանը, սատարելով բալկանյան սլավոնների և հայերին, փորձում էր վերականգնել Արևելքում իր կորցրած դիրքերը և նվազեցնել այնտեղ Արևմուտքի երկրների ազդեցությունը՝ այդ իսկ գործողություններով նպաստելով Օսմանյան կայսրության թուլացմանը: «Ինչ խոսք, ռուսական ցարիզմն ուներ իր տնտեսական ու քաղաքական, ռազմաստրատեգիական շահերն ու պլանները: Սակայն նրա քաղաքականությունը համընկնում էր ինչպես Բալկանյան թերակղզու ճնշված ժողովուրդների, այնպես և Օսմանյան կայսրության արևելքում հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին»[31]:

Բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարն ընդդեմ թուրք բռնակալների խթանեց հայ ժողովրդի ազատատենչ մաքառումները, սակայն այլ էին հայ ժողովրդի «աշխարհագրական, սոցիալ-տնտեսական, ազգային և ռազմաքաղաքական» պայմանները: Խոչընդոտ էր այն փաստը, որ հայ ժողովրդի տարբեր հատվածներ գտնվում էին տարբեր սոցիալ-տնտեսական, քաղաքական, ազգային, պետական զարգացման մակարդակների վրա, ինչը չէր նպաստում ուժերի համախմբմանը ընդդեմ թուրքական լծի: Եթե մեծ տերություններն իրենց շահադիտական դիվանագիտական «խաղերում» առաջ են քաշել բալկանյան սլավոնների պաշտպանության հարցը, ապա արևմտահայության կացության հարցը չի «խաղարկվել» իրենց քաղաքական շահերում: «Հայերը պետք է պայքարեին հանուն իրենց դավանանքի և լեզվի ինչպես վայրենի Արևելքի, այնպես էլ համահարթեցնող Արևմուտքի դեմ»[32]: «1856 թ. Փարիզի դաշնագիրը, որը նպատակ ուներ գալվանիզացիայի ենթարկել բարոյական հյուծախտից մահացող թուրքական կայսրության պետական օրգանիզմը, ընդունեց նրան (Թուրքիային – Հ. Գ.) «եվրոպական կոնցերտի» մեջ, իսկ նրա քրիստոնյաներին՝ Եվրոպայի միացյալ խոստումնալից, բայց իրականում անարդյունք հովանու ներքո»[33]: «Փարիզի դաշնագրին հաջորդած 20 տարվա պատմությունը հաստատում է այն դրույթը, որ եվրոպական մեծ տերությունները պարտավոր են միջամտել թուրքական գործերին, եթե դա է պահանջում քրիստոնյաների փրկությունը և Եվրոպայում՝ խաղաղությունը»[34]:

Անկասկած, Փարիզի դաշնագիրը կարևոր փուլ էր Արևելյան հարցի պատմության մեջ, մանավանդ Ռուսաստանի արևելյան քաղաքականության պատմության մեջ, քանի որ հնարավորություն էր տալիս օսմանահպատակ քրիստոնյաներին ապավինել եվրոպական երկրների միացյալ պաշտպանությանը: Եվրոպական վեց մեծ տերությունների միջև գոյություն ունեցող հակասությունները՝ Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու հարցում, գնալով ավելի էին սրվում և հանգեցրին 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, որի հետևանքում կարող էր սկսվել համաեվրոպական պատերազմ: Բարեբախտաբար, եվրո-

---

[31] **Կիրակոսյան Ջ.,** նշվ. աշխ., էջ 29:
[32] **Диев Гр. А.,** նշվ. աշխ., էջ *53.*
[33] Նույն տեղում, էջ 31-32:
[34] **Мартенс Ф.,** *Восточная война и Брюссельская конференция, 1874-1878, с. 157.*

պական մեծ տերությունները միաբան էին խաղաղության պահպանման հարցում, այդ իսկ պատճառով էլ ցանկանում էին, որ Թուրքիան բավարարեր ապստամբ քրիստոնյաների պահանջները, բայց ցանկանալը քիչ էր, պետք էր ստիպել (Թուրքիային – Հ. Գ.) «ենթարկվել այն ամենին, ինչը պահանջվում էր հօգուտ քրիստոնյաների և Եվրոպայի անդորրի»[35]:

Այսպիսով, մեծ տերությունների հակասությունները՝ Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու նպատակների վերաբերյալ, գնալով սրվում էին, ինչը հանգեցրեց ռուս-թուրքական պատերազմին:

ПОЛИТИКА ДЕРЖАВ В АРМЯНСКОМ ВОПРОСЕ
(50-70-ые гг. XIX в.)

АРУТЮНЯН Г. Г.

Резюме

Балканский кризис 1870-х годов выявил враждебную политику европейских держав в вопросе национального самоопределения как славянских, так и армянского народа.

В Османской Турции, колеблющейся между частичными реформами, предлагаемыми Россией (во благо ее балканской политики), и общими реформами, предлагаемыми европейскими державами, сформировалась идеология и политика паносманизма, направленная против внешних вмешательств. Однако ни пропаганда положений паносманизма, ни провозглашение в 1876 г. Османской конституции не смягчили турецкую политику жесточайшего гнета в отношении туркоподданных христиан, равно как и вылившиеся в противоборство противоречия между Россией и Турцией, а также между европейскими державами и Россией. Результатом этих коллизий стала русско-турецкая война 1877-1878 годов, в которую могла быть вовлечена вся Европа.

[35] Նույն տեղում, էջ 150-151: